

Ս. ՏԵՂԵԱՑ ԻՐԱԿԱՆ 8

ՆԱԽԱՆՁԱԽՆԵԴԻՐ ՊԱՀԱՄԱՆԸ

Երանաշնորհ Տ. Եղիշէ Ս. Պատրիարքի առաջինութիւններէն մին եղաւ Ս. Տեղեաց հայկական իրաւանց անխախտ պահպանութիւն գործին մէջ իր նախանձախնդիր կեցուածքը։ Առաջինութիւն մը, որ տեսակ մը հագեկան ժառանգութեամբ կը մնայ անխառտակելի Ս. Յակոբեանց Միաբանութեան բոլոր անդամակիցներուն սրտին ու հագիին խորը, եթէ անոնք անած ու անած ու հարազամ քաղաքացիները հանդիսացած են Հայկական Երուսաղէմի փոքրիկ թագաւորութեան։ Այս հասկացողութեամբ ալ պատմութիւնը գիրինուորեալ յատկանշական մակդիրը չնորհած է Ս. Յակոբեանց Միաբանութեան։

Իրրե Ս. Տեղեաց հայկական իրաւանց և Status Quo ի վերահսկիչ, պաշտօնի բերումով ամէն անգամ որ իրեն կը ներկայացնէինք Ա. Տեղեաց մէջ ծագած գծուարութիւն մը կամ խնդիր մը, իր կեցուածքը մեկին էր ու յատակ — պաշտպանել մեր դարաւոր նուրիտական իրաւունքները եթէ պէտք է նոյնիսկ արեան գնով իր բերնին մէջ մենք յաճախ կը լսէինք Դուրեկան Ս. Պատրիարքի յատկանշական խօսքը. — Շիմ Պատրիարքութիւնը հաստատուած է Ա. Տեղեաց բուրվառին վրայաւու իրեն համար հետեարար անտեղիտալի սկզբունք էր այդ բուրվառի կրակին ու ծուխին բոցարծարծ կենդանութիւնը։ Ա-

ռով իսկ հասկնաւլի են իր պատրիարքութեան օրերուն Ս. Տեղեաց մէջ ի պաշտպանութիւն մեր իրաւանց քանից կատարուած բաղխումները մեզի իրաւակից համայնքներուն հետ, որոնք չէին վարաներ երբեմն ի վեաս մեր իրաւանց յաւակնութիւններ սնուցանելու Այսպիսի պարագաներուն ինք հաստատապէս քաջալերող ու մզիչ ոգին էր այդ բաղխումներուն, Այս տեսակէտէն յատկանշական երեւոյթներ են նաև այն շինուածական վերանորոգութիւնները, որոնք տեղի ունեցան իր պատրիարքութեան օրով Աստուածամօր Տաճարին մէջ, որ հիմնական և շատ կարևոր նորոգութիւնը կատարուեցաւ Տիրամօր գերեզմանի փոքրիկ մատուին և մանաւանդ Ս. Յարութեան Տաճարին, որ տեսեց մօտ 30 տարիներ և որ տակաւին կը շարունակուի Ճիգ և յարատեւութիւն պահանջող իրազործումներ և մանաւանդ իրազործումներ, որոնք դուռ կը բանային նիւթական-անտեսական շատ ծանր պարտաւորութիւններու, յատկապէս այն օրերուն, երբ վանքը կը դիմագրաւէր անտեսական անձուկ պայմաններ։ Մենք իրրե Ս. Տեղեաց և յատկապէս Ս. Յարութեան Տաճարի վերանորոգութեանց հոկիչ, այս կապակցութեամբ գնահատանքի և արժեորումի խօսքի միայն ունինք հանդէս Երանաշնորհ Պատրիարքին, որ ամենայնիւ եղաւ քաջալերող հովանակութեամբ բուրվառի մէջ մեր անդամական անձնական պատրիարքութիւնը ու ներաշխարհին գըշկորը ցուցադրելու յիմարութեամբ հարացած կոկոսցն,

խորտակումն ու չքացումը, որ կը համակէ սարսուագին անգոնանքով։

Այս օրերու հայ իրականութեան մահերէն էր Երուսաղէմի Ա. Աթոռին գահակալ Եղիշէ Արքեպօ. Տէրտէրեան Աըրթաղան Պատրիարքի անակնկալ մահը, բացառիկ երեսյթ մը իր յորդարուխ գրիչով, ճարտասան քարոզով և անմըրցելի հեղինակութեամբ, որ անջնջելի պիտի մնայ ոչ միայն Երուսաղէմի Ս. Աթոռի առաջնորդութեան մէջ, այլ նաև Հայեկեցւոյ գրական տարեզրութեան մէջ։

Խորտակութիւն աւաղելի է նշել, որ առիւծն իյնաւուն շնագայլեր փոխան Հայեկեցւոյ մտահոգիչ վիճակով տոչորուելու և երկու գլխաւոր Աթոռներու սուրով լուս խոկալու, զառանցանքով իրենց անցեալի սքօլուած դառնութեան սրտի մաղձալի փախուքն ու ներաշխարհին գըշկորը ցուցադրելու յիմարութեամբ հարացած կոկոսցն,

ՀՄԱՅԵԱԿ ԵՊՍ. ԽՆԴՈՑԵԱՆ

Ս. Տեղեաց վերանորոգութեանց հայկական իրաւանց անխախտ պահպանման շատ կենասական այս գործի ճամբռւն վրայի Մեր սրբատեղիները մեր Պատրիարքարանի գոյութեան հիմնախարիսխն են, մեր Պատրիարքարանի միջազգային վարչին ու հանգամանքին վկայականներն են, մեր գորաւոր ու անգնահատելի ժառանգութիւնն են մեր երանելի պապերէն, Եղիշէ Պատրիարք այնքան պատրաստակամօրէն դիմացու նորոգութեանց գործին հսկայական ծախքերուն և վանքի անտեսական ամենանեղ օրերուն իսկ Ս. Յարութեան նորոգութեանց ծախքերը եղան իր մտահոգութիւններուն առաջինը:

Տեղին է այստեղ յիշատակել Ս. Յարութեան Տաճարի հայկական պեղումներու հսկայական և շատ ծախտալից գործը երբ նոյն մեծապատիւ տիտղոսաւորները շատ թեթևամտօրէն կը փորձէին խոչընդոտել և արժէ քաղաքել այդ կենսական ձեռնարկը, յայտարարելով. «Եղածը ի՞նչ է, մաղարաներ կը բանան», Եղիշէ Պատրիարք գիտցաւ շնորհել իսկական արժենորումը այդ մեծածախս գործին, առանց երկմըտելու: Այդ պեղումները ընդարձակեցին և արժենորեցին մեր սրբանդեաց սեփականութիւնները թէ՝ իր տարածք և թէ իրեւ պատմական արժէ քաւոր ներդրումը Անոնք հարստացուցին Ս. Տեղեաց վաղ պատմութիւնը և արժենորեցին մեր Պատրիարքարանի վարիք յաչս օտարներուն:

Անվարան որ հանգուցեալ Պատրիարքի գեղեցիկ մէկ ուրիշ նախածեռնութիւնը եղաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ վերանորոգութեան գործը, որ սկսուեցաւ անցեալ Փետրուարին և անձկութեամբ կը սպասէր անոր աւարտին ու բացման նաւակատիքին, ինչ որ կը մտածէր մեծ հանգիստառութեամբ կատարել: Այսոր այդ եկեղեցւոյ վերանորոգութիւնը բաւական յառաջացած է, և յատնի կերպով եկեղեցին իր ներկայ վերանորոգութեամբ պիտի ըլլայ Երուսաղէմի ամենէն գեղե-

ցիկ և պատմականօրէն ամենէն յատկանչական եկեղեցիներէն մին: Դժբախտաբար սակայն մահը խափանեց իր այս նախածեռնութեան վերջնական իրազործումը տհսած ըլլալու իր բարի տեսչանքը:

Ընդպառաջելով մեր խնդրանքին, հանգուցեալ Պատրիարքը արդէն իսկ սրոշածէր Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ վերանորոգութիւնն են մեր սակայն յետոյ ձեռնարկել Սուրբ Փրկչի վանքին հսօրեայ եկեղեցւոյն և վանտկան կառայցին վերանորոգութեան և վերսկսէլ սրբազն պաշտամունքները այդ սրբավայրէն ներսուն Նոյն իսկ վերանորոգութեան որոշ ծրագիրներ ևս խորհրդակցութեան նիւթ ըրաւ և սակայն մահը խափանեց նաև իր այս սրտագին փափաքին իրագործումը:

Թէև Ս. Տեղեաց վերանորոգութեանց գործէն դուրս է, և սակայն Ակ'արծէ որ այս առթիւ յիշատակուի նաև մեր Պատրիարքարանի ընդհանուր նորոգութեան ձեռնարկը, որ կատարուեցաւ Երանաշնորհ Ս. Պատրիարքի նախաձեռնութեամբ: Այս առթիւ ոչ միայն կատարուեցան ներքին մասերուն ներկիւ և ծեփի և արտաքին նախասրանի (դիւաններու սրան) կառուցողական վերանորոգութիւններ, այլև նոր և շատ վայելուչ կահոյքով և արժէ քառար, մեծածաւալ գորգերով ու հսկայ ջաներով օժտուեցաւ Պատրիարքարանը ու Շնչյաց քարի արժէ քաւոր և հնագիտական արժէք ունեցող առարկաներով զարդարուեցաւ: Պատրիարքարանի ընդունելութեանց փոքր սրահը:

Մեր բոլորին սրտագին աղօթքը թող ըլլայ որ Աստուած Հանգուցեալ Երանաշնորհ Պատրիարքի հոգին ընդունի սրտէ քաղաքացին իր երկնաւոր, յաւիտենական թագաւորութեան, և մեր Աթոռին համար յարուցանէ արժանաւոր, նոր Գահակալ մը որ շարունակէ Երուսաղէմի Աթոռին: Ինութեան և բարեկարգութեան նուիրական և սուրբ գործը:

Կիյրեջ եՊՍ. ԳԱՅԻԿԵԱՆ